

Տնտեսական աճի ներառականությանը միտված հարկարյուջետային քաղաքականության միջազգային փորձ¹

Ավագյան Գայանե Ա.

տ.գ.թ., դոցենտ, Մակրոէկոնոմիկայի ամբիոն, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0003-3395-2473>

avagyangayaneasue@yahoo.com

Աղաբեկյան Էդգար Վ.

տ.գ.թ., դոցենտ, Ֆինանսների ամբիոն, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-4194-5495>

eaghabekyan@gmail.com

Նավասարդյան Միքայել Ա.

ասպիրանտ, Մակրոէկոնոմիկայի ամբիոն, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-5474-6401>

navasardianmichael@gmail.com

ՀՏԳ՝ 338.2; EDN: FUCSCX; JEL: O23, D63

DOI: 10.58587/18292437-2024.4-164

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ներառականություն, հարկարյուջետային քաղաքականություն, միջազգային փորձ, հարկարյուջետային գործիքներ, ծրագրեր, անհավասարություն, կենսապայմաններ, կանոններ

Международный опыт фискальной политики, направленной на инклюзивность экономического роста

Авагян Гаяне А.

к.э.н., доцент кафедры макроэкономики, АГЭУ (Ереван, РА)

Агабекян Эдгар В.

к.э.н., доцент кафедры финансов, АГЭУ (Ереван, РА)

Навасардян Микаел А.

аспирант кафедры Макроэкономики АГЭУ (Ереван, РА)

Аннотация. Задача макроэкономической политики состоит в том, чтобы объединить политику, которая способствует экономическому росту, создает и расширяет равные возможности для участия в экономике и получения от нее выгоды. Сюда входит политика по улучшению функционирования рынков труда, уменьшению дискриминации, поддержке равного доступа к образованию и навыкам, а также повышению экономической и финансовой интеграции во всех секторах общества. Идея инклюзивности экономического развития была введена в научный оборот в последние десятилетия и стала одним из основных ориентиров разработчиков и реализов экономической политики многих стран мира. Политика формирования и перераспределения государственных доходов через государственный бюджет важна с точки зрения преодоления существующего неравенства в обществе и решения проблем инклюзивности. Поэтому важно активизировать государственную политику инструментами фискальной политики, повысить ее эффективность в контексте обеспечения инклюзивности экономического роста, смягчения неравенства в распределении доходов и национального богатства.

В данной статье изучен и интерпретирован международный опыт и особенности применения фискальной политики, направленной на инклюзивность экономического роста, что особенно важно с точки зрения выявления возможностей ее локализации в РА. Сделанные выводы могут быть полезны при разработке решений, направленных на повышение инклюзивности фискальной политики РА.

Ключевые слова и словосочетания: инклюзивность, фискальная политика, международный опыт, фискальные инструменты, программы, неравенство, условия жизни, правила

International experience with fiscal policies for inclusive economic growth

Avagyan Gayane A.

PhD in Economics, Associate Professor of the Chair of Macroeconomics, ASUE (Yerevan, RA)

Aghabekyan Edgar V.

PhD in Economics, Associate Professor of the Chair of Finance, ASUE (Yerevan, RA)

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «Հարկարյուջետային քաղաքականության ներառականությանն ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» դրամաշնորհային թեմայով հետազոտության շրջանակներում:

Abstract. The challenge for macroeconomic policy is to integrate policies that support economic growth and create and expand equal opportunities to participate in and benefit from the economy. This includes policies to improve the functioning of labour markets, reduce discrimination, support equal access to education and skills, and increase economic and financial inclusion in all parts of society. The idea of inclusive economic development has been introduced into academic discourse in recent decades and has become one of the main guidelines for economic policy makers and implementers in many countries around the world. The policy of formation and redistribution of public revenues through the state budget is important from the point of view of overcoming the existing inequalities in society and solving the problems of inclusiveness. Therefore, it is important to activate public policy with fiscal policy instruments, to increase its effectiveness in the context of ensuring inclusiveness of economic growth, mitigating inequality in the distribution of income and national wealth.

This article studies and interprets the international experience and specific features of the application of fiscal policy oriented to the inclusiveness of economic growth, which is especially important from the point of view of identifying opportunities for its localisation in the Republic of Armenia. The conclusions drawn can be useful in the development of solutions aimed at increasing the inclusiveness of fiscal policy in the Republic of Armenia.

Keywords & phrases: inclusiveness, fiscal policy, international experience, fiscal instruments, programs, inequality, living conditions, rules

Ներածություն: Ցանկացած երկրի տնտեսական՝ հատկապես հարկաբյուջետային քաղաքականություն մշակողներն ու իրականացնողները այն աղապատացնում են իրենց երկրի առանձնահատկություններին, սակայն եթե դիտարկենք ընդհանուր միջազգային պատկերը, ապա քաղաքականությունների վերանայման և դրանց մեջ փոփոխությունների կատարելու միտում կա: Հիմնական պատճառներից մեկը COVID-19 համավարակն էր, ինչն աննախադեպ առողջապահական, տնտեսական և սոցիալական ճգնաժամ առաջացրեց: Տնտեսության ճգնաժամային երևույթներ ի հայտ եկան ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներում և դրսևորվեցին բոլոր տարածաշրջաններում: Այն սպառնաց միլիոնավոր մարդկանց կյանքին ու կենսապահովմանը, խորացրեց աղքատությունն ու անհավասարությունը, էականորեն հետ մղեց զարգացման ձեռքբերումները: Գլոբալ վերականգնումը հնարավոր դարձավ կառավարությունների՝ մասնավոր հատվածին տրամադրված շարունակական, տարբերակված և նպատակային ֆինանսական, տեխնիկական աջակցության շնորհիվ:

Շատ հեղինակներ պնդում են, որ աճը և արդարությունը պարտադիր չէ, որ հակասական լինեն [3]: Հարկաբյուջետային քաղաքականության գործիքների համադրման և քաղաքականության առաջնահերթությունների ձևավորման դեպքում երկրները շատ դեպքերում կարող են հասնել ավելի լավ բաշխման արդյունավետության: Բարելավել տնտեսական արդյունավետությունը:

Հարկաբյուջետային քաղաքականության ներառականության հարցերը ավելի սրվեցին տնտեսության թվայնացման գործընթացների արագացմանը զուգահեռ: Սա է պատճառը, որ հենց այս շրջանում տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից սկսվեցին

հետազոտություններ կատարվել այդ ուղղությամբ: Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության կողմից իրականացված վերլուծությունում ներկայացվում է տնտեսության թվայնացումից բխող հարկային մարտահրավերներին դիմակայելու լուծումների իրականացման շրջանակը, BEPS (Base Erosion and Profit Shifting)-ի նվազագույն չափորոշիչների իրականացման առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվում զարգացող երկրների մասնակցությանը ներառական շրջանակում կատարող բարեփոխումներին [5]: Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունում ուշադրության կենտրոնում է գտնվում հարկային միջոցների բացահայտումը, որոնք կարող են խթանել եկամուտների մոբիլիզացիան ներառական և բարենպաստ աճի ապահովման համար: Հեղինակները եզրակացնում են, որ երկրներն ունեն բազմաթիվ տարբերակներ՝ բարձրացնելու իրենց հարկային համակարգերի արդյունավետությունը, նվազեցնելու հիմնական հարկային աղավաղումները աճին նպաստելու համար, օգտագործել «ուղղիչ հարկեր»՝ աջակցելու կանաչ տնտեսության վերականգնմանը և հարմարեցնել հարկային նախագծերը՝ COVID-19 համաճարակից հետո ավելի ու ավելի թվայնացված տնտեսությանը դիմակայելու համար [2]:

Հատկապես ռեֆորմների շարունակական շրջափուլերի մեջ գտնվող երկրների համար, որոնցից մեկն էլ Հայաստանի Հանրապետությունն է, տնտեսական քաղաքականության տարբեր գործիքներով տնտեսական զարգացման ներառականության ապահովումը առավել քան կարևոր է, այն իմաստով, որ տնտեսության մեջ տասնամյակներ տևած համակարգային և ինստիտուցիոնալ բարեփոխումները, տնտեսության մեջ արձանագրված տպավորիչ տնտես-

սական աճը ոչ միայն շոշափելիորեն չեն բարձրացրել բնակչության գերակշիռ մեծամասնության բարեկեցությունն ու կյանքի որակը, այլև հանգեցրել են աղքատության մակարդակի աճին և, ըստ եկամուտների ու ըստ ունեցվածքի, բնակչության առավել աղքատ ու հարուստ խավերի միջև սոցիալական ճեղքվածքի խորացմանը: Հարկաբյուջետային քաղաքականությունը՝ ուղղակիորեն (հարկերի և տրանսֆերտների միջոցով) և անուղղակիորեն (աշխատանքի և արտադրության խթանման և հանրային ապրանքների և անհատական ծառայությունների մատուցման միջոցով, ինչպիսիք են կրթությունը և առողջապահությունը) ազդելով տնային տնտեսությունների սպառման վրա, այս պարագայում դառնում է անհավասարության դեմ պայքարի կառավարության ամենահզոր գործիքը: Ներառականության ապահովմանը միտված հարկաբյուջետային քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրումը նպաստում է մշակել և առաջարկել պետական բյուջեի հաշվետվությունների, ուղերձների և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի բարելավման մոտեցումներ, որոնք կարտացոլեն բնակչության կենսամակարդակի բարձրացման ու ներառականության վրա ազդող հարկաբյուջետային քաղաքականության գործիքները և

դրանց քանակական ազդեցությունները: Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել տնտեսական աճի ներառականությանը միտված հարկաբյուջետային քաղաքականության միջազգային փորձը և կիրառման առանձնահատկությունները, բացահայտել կիրառվող հիմնական մեխանիզմները և գործիքները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Տնտեսական աճի միևնույն տեմպի պարագայում աղքատության կրճատման, զբաղվածության մակարդակի բարձրացման, մարդկային զարգացման հնարավորությունները տարբեր են՝ պայմանավորված երկրի տնտեսության կառուցվածքից, տնտեսական, ինստիտուցիոնալ պայմաններից, վարվող տնտեսական քաղաքականությունից: Տնտեսական աճը կարող է փոխակերպվել հասարակական բարեկեցության, եթե այն ներառական է, կայուն և արդարացի: Վերոգրյալը հիմնավորող փաստ է այն, որ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով 12-րդ տեղում գտնվող Իսլանդիան 2018 թ.-ին ներառականության ինդեքսով գտնվել է 2-րդ հորիզոնականում [8, էջեր 3, 13]: Հատկապես կարևորվում է տնտեսական աճը խթանող քաղաքականությունը և այդ աճից օգտվելու հավասար հնարավորությունների և ազատության աստիճանը:

Աղյուսակ 1. Առաջատար երկրների տասնյակը 2021 թվականին՝ ըստ ներառական զարգացման համայնքի, համայնքի 2-րդ և 3-րդ հենասյունների

Ընդհանուր/համակցված/ ներառական զարգացման ինդեքս		Կենսապայմաններ հենասյուն		Հավասարություն հենասյուն	
Երկրներ	Ինդեքսի արժեքը	Երկրներ	Ինդեքսի արժեքը	Երկրներ	Ինդեքսի արժեքը
Լյուքսեմբուրգ	91.8	Բելգիա	100	Ֆինլանդիա	98.2
Շվեյցարիա	78.1	Շվեդիա	98.7	Նորվեգիա	97
Իռլանդիա	76.9	Ֆինլանդիա	97.7	Շվեդիա	96
Սինգապուր	76.1	Դանիա	97.2	Դանիա	95.8
Դանիա	75.9	Նիդեռլանդներ	95.3	Շվեյցարիա	
Նորվեգիա	74.4	Կանադա	95.2	Իսլանդիա	95
Շվեդիա	72.5	Շվեյցարիա	94.4	Նիդեռլանդներ	92.4
Մեծ Բրիտանիա	68.7	Նորվեգիա	94.1	Ավստրալիա	91.2
Նիդեռլանդներ	68.6	Գերմանիա	94.1	Ավստրիա	89.9
Ֆինլանդիա	67.5	Ֆրանսիա	93.8	Կանադա	89.1

Աղյուսակը կազմված է հեղինակների կողմից, աղբյուրը՝ [1]

Տնտեսական աճի ներառականությանը միտված հարկաբյուջետային քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրության և մեկնաբանման գործընթացում երկրների ընտրության հարցում հատկապես կարևորել ենք ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի կողմից մշակված ներառական աճի ընդլայնված համաթիվը¹, որը, բաղկացած լինե-

լով չորս հիմնական սյուներից և 27 ցուցիչներից, միավորում է կենսապայմանների, անհավասարության և շրջակա միջավայրի ասպեկտները տնտեսության հետ:

Ի սկզբանե կառուցվել է «Աճ և զարգացում», «Ներառականություն» և «Միջսերնդային արդարություն և կայունություն» հենասյուններում ներառված 12 ցուցանիշներից: 2017 թ. ՆՁՀ հաշվարկները կատարվել են 107 երկրների (29 զարգացած և 78 զարգացող) համար, իսկ 2018-ի հաշվարկները՝ 103 երկրների (29 զարգացած և 74 զարգացող) համար:

¹ «Ներառական աճի և զարգացման զեկույց-2017»-ում ներկայացված ներառական զարգացման համաթիվն (ՆՁՀ),

Աղյուսակ 1-ում ներկայացված են նաև ներառական զարգացման համաթվի 2-րդ և 3-րդ հենասյուները, քանի որ դրանք ներառում են մեր հետազոտության տեսանկյունից կարևորվող այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ սոցիալական պայմաններն ու առողջապահությունը, աշխատուժի մասնակցությունը, եկամուտների անհավասարությունը, դպրոցական կրթության ընդգրկումը:

Փաստենք, որ 2021 թվականին, ըստ ներառական զարգացման համաթվի, առաջին տասնյակի երկրների կազմը և հերթականությունը փոփոխվել է, ինչը մեկ անգամ ևս փաստում է հատկապես շոկային իրավիճակներում վարվող հարկաբյուջետային քաղաքականության կարևորությունը:

Ընդհանուր առմամբ, ներառական աճի ավելի բարձր մակարդակները կապված են տնտեսապես ավելի զարգացած երկրների հետ: Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան և Իռլանդիան առաջին վարկանիշային երկրներից են՝ ընդհանուր ինդեքսային միավորի հիման վրա: Առաջին տեղերում հայտնված բոլոր 30 երկրները զարգացած տնտեսություններ են: Սա բավարար

հիմք է եզրակացնելու, որ ավելի ընդգրկուն/ներառական աճ հաճախ չի ապահովվում, քանի դեռ երկիրը չի հասել տնտեսական աճի և բարգավաճման որոշակի մակարդակի: Այնուամենայնիվ, որոշ զարգացող երկրներ ավելի բարձր միավորներ ունեն, քան շատ զարգացած երկրներ:

Ինչպես նշել է Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջ. Սթիգլիցը [6, էջ 149], կանոնները կարևոր են, քանի որ դրանք որոշում են, թե որքան արագ է աճում տնտեսությունը, և ով է կիսում այդ օգուտները: Նա պնդում է, որ ճիշտ կանոնների ներքո վարվող տնտեսական քաղաքականության արդյունքում, ընդհանուր բարգավաճումը և ուժեղ տնտեսական ձեռքբերումները ամրապնդում են միմյանց: Ջ. Սթիգլիցը առաջարկում է սահմանել կանոններ և ձևավորել ինստիտուտներ, որոնք ապահովում են միջին խավի անվտանգությունը և հավասար հնարավորությունները:

Անդրադառնանք այն հարկաբյուջետային կանոններին, որոնց ներքո առանձին երկրներում վարվում է հարկաբյուջետային քաղաքականություն:

Աղյուսակ 2. Հարկաբյուջետային քաղաքականության կանոնների ուղղությունները և ներառական աճի բարձր հասնելիս գրանցած երկրները, որոնցում դրանք կիրառվել (ուճ) են

Կանոն	Երկրներ
Ծախսային կանոն	Լուքսեմբուրգ, Սինգապուր, Դանիա, Շվեդիա, Նիդեռլանդներ, Ֆինլանդիա, Բելգիա, Կանադա, Իսլանդիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրալիա
Եկամտային կանոն	Դանիա, Նիդեռլանդներ, Բելգիա, Ֆրանսիա, Ավստրալիա
Բյուջեի հաշվեկշռի կանոն	Լուքսեմբուրգ, Շվեյցարիա, Իռլանդիա, Սինգապուր, Դանիա, Նորվեգիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ, Ֆինլանդիա, Բելգիա, Կանադա, Իսլանդիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրալիա, Ավստրիա
Պարտքի կանոն	Լուքսեմբուրգ, Շվեդիա, Մեծ Բրիտանիա, Ֆինլանդիա, Կանադա, Իսլանդիա, Ավստրալիա
Վերազգային կանոններ	Լուքսեմբուրգ, Իռլանդիա, Դանիա, Շվեդիա, Մեծ Բրիտանիա/մինչև 2020 թվականի հունվարը/, Նիդեռլանդներ, Ֆինլանդիա, Բելգիա, Գերմանիա, Ֆրանսիա

Աղյուսակը կազմված է հեղինակների կողմից, աղբյուրը՝ [4]

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, երկրների մեծամասնությունն ունի բազմակի հարկաբյուջետային կանոններ, որոնք ներառում են հարկաբյուջետային նպատակներին հասնելու բյուջեի տարբեր բաղադրիչներ: Այժմ երկրներն ունեն միջինը մոտ 3 հարկաբյուջետային կանոն՝ 2000-ականների սկզբի մոտ 2-ի դիմաց: Աճն ավելի ցայտուն է դրսևորվել Եվրոպայում, որտեղ շատ երկրներ ընդունել են իրենց ազգային կանոնները: Բազմաթիվ կանոնների օգտագործումը կարող է դրդված լինել ավելի մեծ հարկաբյուջետային կարգապահություն ապա-

հովելու կամ մի քանի հարկաբյուջետային նպատակների հասնելու համար: Բայց բազմակի կանոնները հանգեցնում են հարկաբյուջետային շրջանակի բարդության (ներառյալ կանոնների և նպատակների միջև հակասությունը): Որոշ դեպքերում մեծ թվով կանոնները կապված էին նոր կանոնների ներդրման ժամանակ գոյություն ունեցող կանոնների վերացման քաղաքական դժվարությունների հետ: Ամենատարածված համակցություններն են պարտքի վերին շեմը կամ պարտքի խարխիսը:

Ամենատարածված կանոնները են եղել պարտքի կանոնների համակցությունը ծախսերի գործառնական սահմանաչափերի և/կամ բյուջեի հաշվեկշռի հետ: Հարկաբյուջետային կանոններ ունեցող երկրների շուրջ 70 տոկոսն ունի պարտքի կանոններ տարեկան բյուջեի ազդեցությունների գործառնական սահմանաչափերի գույքակցմամբ: Մասնավորապես, 2021 թվականին հարկաբյուջետային կանոններ ունեցող տնտեսությունների մեկ երրորդն ուներ պարտքի կանոն՝ դեֆիցիտի սահմանաչափով և ծախսերի վերին շեմով: Ծախսերի կանոնները գնալով ավելի տարածված են դառնում, հաճախ սահմանվում են որպես տարեկան ծախսերի աճի վերին շեմ: Եկամուտների կանոնները ավելի քիչ են օգտագործվում մասամբ արտացոլելով այն փաստը, որ կառավարությունները ավելի քիչ վերահսկողություն ունեն տարեկան եկամուտների նկատմամբ: Եկամուտների կանոնները զարգացած երկրներում հաճախ սահմանում են եկամուտ/ՀՆԱ հարաբերակցության վերին շեմը՝ հարկերի հետագա բարձրացումից խուսափելու նպատակով, մինչդեռ ցածր եկամուտ ունեցող երկրներում կանոնները հաճախ սահմանվում են որպես հատակ՝ եկամուտների հավաքագրումը խրախուսելու համար:

Տարբերություններ են բացահայտվել նաև եկամտային խմբերի միջև: Ծախսային կանոնները տարածված են, հիմնականում զարգացած տնտեսություններ շրջանում: Զարգացած տնտեսությունների մոտ երեք քառորդն ունի ծախսային կանոններ, մասամբ արտացոլելով այն, որ մի քանի եվրոպական երկրներ ընդունել են ծախսային կանոնները՝ որպես իրենց ազգային հարկաբյուջետային շրջանակի մաս: Այնուամենայնիվ, սահմանային շուկաների և զարգացող տնտեսությունների միայն մեկ երրորդից պակասն է ընդունել ծախսային կանոններ, ինչն արտացոլում է եկամուտների հավաքագրման ջանքերով ծախսերը մեծացնելու մտադրությունը: Պարտքի կանոնները հատկապես տարածված են զարգացող տնտեսություններում: Պետական պարտքի կանոնների մեծ մասը սահմանվում է որպես պարտքի սահմանաչափ կամ վերին շեմ, մինչդեռ փոքրամասնությունը (մոտ 10 տոկոս) օգտագործում է (միջնաժամկետ) խարխիսի հայեցակարգ (Ֆինլանդիա, Միացյալ Թագավորություն): Երկրների մեծ մասն ունի պարտքի կանոն՝ արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով: Բյուջեի հաշվեկշռի կանոններն ավելի գերակշռող են զարգացած տնտեսություններում (Չեխիա, Էստոնիա), քան սահմանային շուկաներում (Չիլի, Կոլումբիա):

Աղյուսակ 3. Ներառական աճի բարձր համաթիվ գրանցած երկրներում կիրառվող(ած) հարկաբյուջետային քաղաքականության կանոնների առանձնահատկությունները¹

Երկիր	Ծախսային	Եկամտային	Բյուջեի հաշվեկշռի	Պարտքի
Ավստրալիա	ոչ / ոչ	ոչ / ոչ	ոչ / ոչ	ոչ / ոչ
Ավստրիա	-	-	այո / այո	-
Բելգիա	այո / այո	այո / այո	այո / այո	-
Գերմանիա	ոչ / ոչ	-	այո / այո	-
Դանիա	այո / այո	ոչ / ոչ	այո / ոչ	-
Իռլանդիա	-	-	այո / այո	-
Իսլանդիա	ոչ / ոչ	-	այո / այո	այո / այո
Լուքսեմբուրգ	այո / ոչ	-	այո / այո	այո / ոչ
Կանադա	այո / ոչ	-	այո / ոչ	այո / ոչ
Մեծ Բրիտանիա	-	-	այո / ոչ	այո / ոչ
Նիդեռլանդներ	այո / այո	այո / այո	այո / ոչ	-
Նորվեգիա	-	-	ոչ / ոչ	-
Շվեդիա	այո / ոչ	-	այո / ոչ	այո / ոչ
Շվեյցարիա	-	-	ոչ / այո	-
Սինգապուր	ոչ / այո	-	ոչ / այո	-
Ֆինլանդիա	այո / ոչ	-	այո / ոչ	այո / ոչ
Ֆրանսիա	այո / ոչ	այո / ոչ	այո / այո	-

¹ Ցուցանիշներից առաջինը ներկայացնում է արդյոք կանոնի կիրառումը ենթարկվում է մշտադիտարկման կառավարությունից դուրս, երկրորդը՝ արդյոք սահմանված են պարտադիր կատարման պաշտոնական գործընթացներ

Համաճարակը զանգվածային փորձություն էր կանոնների վրա հիմնված հարկաբյուջետային շրջանակների համար: Դա հանգեցրեց «խուսափելու» դրույթների համատարած ակտիվացման՝ հարկաբյուջետային շրջանակներում կանոնների սահմանները ժամանակավորապես կասեցնելու համար՝ արտակարգ հարկաբյուջետային աջակցություն ապահովելով տնային տնտեսություններին և կազմակերպություններին: Այլ երկրներ, առանց «խուսափելու» դրույթների, ստիպված էին դիմել կանոնների ժամանակավոր կասեցումների կամ փոփոխության, կամ ներմուծել նոր հարկաբյուջետային կանոններ:

Գլոբալացումը և տեխնոլոգիական փոփոխությունները, ներառյալ թվայնացումը և ավտոմատացման առաջընթացը, առաջացնում են տնային տնտեսությունների կյանքի որակի էական բարձրացում և որոշ զարգացող տնտեսություններում նպաստում են աղքատության մակարդակի նվազեցմանը: Չնայած տնտեսական ցուցանիշների բարելավմանը, շատ տնտեսություններ շարունակում են արտադրողականության ցածր աճ և աշխատավարձերի մակարդակ ունենալ, ինչը հանգեցնում է անհավասարության մակարդակի բարձրացման: Ավելին, տեխնոլոգիական փոփոխությունները կարող են աշխատուժի պահանջարկը տեղափոխել դեպի աշխատատեղեր, որոնք կպահանջեն ճանաչողական հմտությունների ավելի մեծ օգտագործում, որոնց համար շատ աշխատողներ ներկայումս համապատասխան պատրաստվածություն չունեն: Սա կարող է հանգեցնել աշխատավարձի տարբերությունների ավելացման, բարձր, միջին և ցածր հմտություն-

ներ ունեցողների միջև կայուն և ապահով աշխատանքի և կյանքի հնարավորությունների հասանելիության հետ կապված խնդիրների: Քաղաքականություն մշակողները բախվում են մարտահրավերների՝ միաժամանակ լուծելու արտադրողականության ցածր աճի և աճող անհավասարության խնդիրները: Այս մարտահրավերները ծագում են բնակչության ծերացման և կլիմայի փոփոխության հետևանքով աճող հարկաբյուջետային ճնշումների համատեքստում: Գլոբալացված և արագորեն փոփոխվող աշխարհում կապիտալի և աշխատուժի շարժունակությունը բարձրացնում է աշխատուժի և կապիտալի հարկերի օգտագործման արդյունավետության ծախսերը ներքին արդարության նպատակներին հասնելու համար: Տեխնոլոգիական փոփոխությունը և դրա հետևանքները աշխատանքի ապագայի վրա մարտահրավեր են նետում ավանդական սոցիալական պաշտպանության համակարգերին և պահանջում են ճշգրտման մեխանիզմներ՝ անհատներին օգնելու անցնել անցումային փուլը [7]:

Հարկաբյուջետային քաղաքականության ներառականության նպատակին հասնելու համար ընտրված գործիքները շատ տարբեր են: Տարբեր երկրներում առավել հաճախ օգտագործվող հարկաբյուջետային գործիքները պայմանականորեն դասակարգվել են 3 խմբում՝ հարկային եկամուտներ, պետական ծախսեր, կենսամակարդակ: Խմբերի անունները պայմանավորված են, թե տվյալ գործիքը հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության որ ուղղությանն է առնչվում:

Աղյուսակ 4. Հարկային եկամուտների համատեքստում հարկաբյուջետային քաղաքականության գործիքները և դրանց ազդեցությունը ներառականության վրա

Անվանում	Նկարագրություն	Ազդեցությունը ներառականության վրա	Երկրներ, որտեղ կիրառվել/ում են
Դրոգրեսիվ հարկում	Հարկային դրույթն աճում է եկամտի աճին զուգընթաց:	Հանրության՝ ավելի բարձր և ավելի ցածր եկամուտ ունեցող շրջանակների միջև հավասարության մեծացում հարուստների եկամուտների ավելի մեծ չափաբաժնի ներգրավման միջոցով:	Դանիա, Բելգիա, Գերմանիա
Վաստակած եկամտահարկի վարկ	Հարկային արտոնություն է (հարկային վարկ) այն մարդկանց համար, ովքեր աշխատում են, սակայն եկամուտը միջինից ցածր է կամ միջինին հավասար: Այն ենթադրում է հարկի վերադարձ կամ վճարած եկամտահարկի նվազեցում:	Օգնում է նվազեցնել եկամուտների անհավասարությունը՝ ավելի ցածր եկամուտ ունեցողներին ֆինանսական խթան տալով:	ԱՄՆ
Ֆինսկալ ապակենտրոնացում	Ֆինսկալ ապակենտրոնացումը վերաբերում է ռեսուրսների վերաբաշխմանը կենտրոնական կառավարությունից դեպի	Կարող է բարձրացնել հաշվետվողականությունը՝ դարձնելով կառավարությունների արձագանքը քաղաքացիների նախասիրություններին	ԱՄՆ, Գերմանիա, Կանադա, Շվեյցարիա,

Անվանում	Նկարագրություն	Ազդեցությունը ներառականության վրա	Երկրներ, որտեղ կիրառվել/ում են
	Ենթապետական մակարդակներ: Այն ենթադրում է ծախսերի կատարման և եկամուտների հավաքագրմանն ուղղված գործառնությունների վերագրում տեղական իշխանություններին:	ավելի արագ և արդյունավետ, կարող է խթանել մակրոտնտեսական կայունությունը:	Բրազիլիա
Հարկային բազայի ընդլայնում	Հարկման ենթակա տնտեսական գործունեության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շրջանակի ընդլայնում:	Այն մեծացնում է եկամուտների ներգրավման հնարավորությունները, բարելավում է հարկային արդարությունը և նվազեցնում է կախվածությունը հարկատուների կամ տնտեսական գործունեությունների փոքր շրջանակից:	ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, Կանադա, Ավստրալիա, ԵՄ
Բացասական եկամտային հարկ	Համակարգ, որտեղ սահմանված մակարդակից բարձր եկամուտ ստացողները հարկ են վճարում պետությանը, իսկ դրանից ցածր եկամուտ ունեցողները՝ ստանում են գումար պետական միջոցներից:	Այն ապահովում է երաշխավորված նվազագույն եկամուտ բոլոր քաղաքացիներին՝ անկախ նրանց աշխատանքային կարգավիճակից, և կարող է կոտրել աղքատության ցիկլը:	Պիլոտային (փորձնական) ծրագրեր ԱՄՆ-ում, Կանադայում

Առաջին խմբում ներառված 5 գործիքներն ուղղակի ազդեցություն ունեն պետության հարկային եկամուտների չափի վրա և սոցիալական հավասարության հնարավորություն են ստեղծում. մեծանում է եկամուտների ներգրավման

շրջանակը և բարելավվում է հարկային արդարությունը՝ հավասարակշռելով ճգնաժամային կամ տնտեսության թեժացման փուլերը երկրում:

Աղյուսակ 5. Պետական ծախսերի համատեքստում հարկաբյուջետային քաղաքականության գործիքները և դրանց ազդեցությունը ներառականության վրա

Անվանում	Նկարագրություն	Ազդեցությունը ներառականության վրա	Երկրներ, որտեղ կիրառվել/ում են
Ուղղակի նպաստի փոխանցում	Կառավարությունը էլեկտրոնային եղանակով ուղղակիորեն փոխանցում է սուբսիդիաներ, նպաստներ կամ կանխիկ վճարումներ իրավասու շահառուների բանկային հաշիվներին:	Այն նվազեցնում է կոռուպցիան և դրամական միջոցների արտահոսքը, ինչպես նաև սահմանում է հասանելիության բարձր մակարդակ:	Հնդկաստան
Պայմանական կանխիկ փոխանցումներ	Կանխիկ գումար է փոխանցում տնային տնտեսություններին՝ պայմանով, որ նրանք նախապես որոշված (հիմնականում՝ մարդկային կապիտալում) ներդրումներ կատարեն իրենց երեխաների վրա:	Աղքատության դեմ պայքար և մարդկային կապիտալի ներառական զարգացում:	Կանադա, Բրազիլիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն
Ենթակառուցվածքային ներդրումներ՝ ուղղված անապահով շրջաններին	Ներդրումների իրականացում թերզարգացած տարածքների ենթակառուցվածքային նախագծերում:	Նոր աշխատատեղերի ստեղծում, հնարավորությունների հասանելիության բարելավում և տարածաշրջանային անհավասարության նվազեցում:	Չինաստան, ԵՄ, Բրազիլիա, ԱՄՆ
Հանրային ծառայությունների առաջանցիկ (պրոգրեսիվ)	Պետական բյուջետավորման ավելի մեծ մասնաբաժին է հատկացվում այն ծառայություններին, որոնք առավելապես օգուտ են բերում	Օգնում է նվազեցնել անհավասարությունը և խթանել սոցիալական շարժունակությունը:	Հյուսիսային Եվրոպայի երկրներ (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա,

Անվանում	Նկարագրություն	Ազդեցությունը ներառականության վրա	Երկրներ, որտեղ կիրառվել/ում են
Ծախսեր	հանրության ցածր եկամուտ ունեցող խմբերին:		Ֆինլանդիա, Իսպանիա, Գերմանիա, Կանադա, Ուրուգվայ
Համընդհանուր հիմնական եկամուտ	Այն պետական քաղաքականություն է, որտեղ երկրի յուրաքանչյուր քաղաքացի կամ բնակիչ ստանում է կանոնավոր, անվերապահ գումար՝ անկախ իր եկամտի մակարդակից կամ զբաղվածության կարգավիճակից: Ֆինանսական ապահովության հիմնական մակարդակ՝ անհատների հիմնական կարիքները հոգալու համար:	Կարող է հասարակության որոշ շրջանակների խրախուսել գտնել աշխատանք, մինչդեռ մյուսները կարող են ընտրել կես դրույքով աշխատանք կամ շարունակել կրթությունը:	Ընթացիկ ծրագրեր Նիդեռլանդներում, պիլոտային (փորձնական) ծրագրեր Ֆինլանդիայում, Բենիայում

Երկրորդ խմբում առանձնացված 5 գործիքները ներկայացնում են պետական ծախսեր, որոնք ուղղված բարեկեցության բարձրացմանը,

սոցիալական անհավասարության նվազմանը, մարդկային կապիտալի զարգացմանը և աշխատաշուկայի ակտիվացմանը:

Աղյուսակ 6. Կենսամակարդակի բարելավման համատեքստում ՀԲԲ գործիքները և դրանց ազդեցությունը ներառականության վրա

Անվանում	Նկարագրություն	Ազդեցությունը ներառականության վրա	Երկրներ, որտեղ կիրառվել(ում) են
Աշխատանքային առավելություններ	Կառավարության կողմից աշխատող անհատներին տրամադրվող առավելություններ (ցածր եկամուտ, հաշմանդամություն ունեցողների և այլ խմբերի համար)	Նվազեցնել աղքատությունը և գործազրկությունը, խթանել ցածր աշխատավարձով աշխատողներին չդառնալ գործազուրկ:	ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա
Աշխատանք-կյանքի հավասարակշռության օրենսդրություն	Օրենսդրությամբ ամրագրված կամ պետական մարմինների քաղաքականություններում ներառվող դրույթներ, որոնք սահմանում են աշխատանքային ճկուն պայմանավորվածություններ՝ ավելի առողջ և կայուն աշխատանքային միջավայր ստեղծելու նպատակով:	Բարելավում է աշխատաշուժի մասնակցության, արտադրողականության և սոցիալական բարեկեցության մակարդակները, նվազեցնում է աշխատող ընտանիքների բեռը:	Ֆրանսիա, Նորվեգիա, Գերմանիա, Շվեդիա, Դանիա, Ֆինլանդիա, Ճապոնիա
Անվճար (մատչելի) կրթություն	Կառավարությունը միջոցներ է հատկացնում անվճար կամ մատչելի կրթություն (նաև բարձրագույն) ապահովելու համար, հիմնականում հանրային մակարդակով:	Բարձրացնում է կրթության հասանելիության մակարդակը բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից, խթանում է արտադրողականության և համախառն պահանջարկի բարձրացմանը:	Ֆինլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Դանիա, Իսպանիա
Մատչելի բնակարանային ծրագրեր	Նախաձեռնություններ, որոնք նախատեսված են ցածր և միջին եկամուտ ունեցող անհատների և ընտանիքների համար բնակարանները մատչելի դարձնելու համար:	Նպատակ ունեն կամրջել տնային տնտեսության եկամտի և բնակարանի՝ արժանապատիվ վարձակալության կամ գնման շուկայական արդար գնի միջև առկա ճեղքը:	ԱՄՆ, Ֆրանսիա, Միեգապուր, Հոնկ Կոնգ, Չիլի
Վաղ մանկության կրթական ծրագրեր	Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր, որոնք ուղղորդում և խթանում են երեխաների կոգնիտիվ, սոցիալական, էմոցիոնալ, ֆիզիկական սան ու զարգացումը	Ստեղծում են միջավայրեր, որոնք կարող են բավարարել երեխաների տարատեսակ կարիքները, մյուս կողմից լեզվական տարբեր ծագում ունեցող երեխաների	Հյուսիսային Եվրոպայի երկրներ (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա,

Անվանում	Նկարագրություն	Ազդեցությունը ներառականության վրա	Երկրներ, որտեղ կիրառվել(ում) են
	նախադպրոցական տարիքում:	աջակցությունը կարող է օգնել նրանց ավելի արագ սովորել և հարմարվել տվյալ միջավայրին և իրենց զգալ այդ հասարակության լիարժեք անդամ:	Ֆինլանդիա, Իսլանդիա), ԱՄՆ, Ճապոնիա, Հարավային Կորեա

Երրորդ խմբում ներառված են այն ծրագրերն ու օրենքները, որոնք նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը դեռ վաղ տարիքից, նվազեցնում են աշխատող ընտանիքների ֆինանսական բեռն ու բարձրացնում աշխատանքի նկատմամբ ձգտումը:

Հատկապես ուսանելի է Մինգապուրի՝ Մատչելի բնակարանային ծրագրեր գործիքի կիրառման փորձը: Միգապուրը, տնօրինելով բավականին սահմանափակ ռեսուրսներ, իր հիմնական ուշադրությունը բևեռել է մարդկային ռեսուրսի վրա: Վերջինիս զարգացման և արդյունավետ օգտագործման համար Մինգապուրը ընդունել և կիրառում է բնակարանային ծրագրեր, քանի որ դա առաջնային և կարևորագույն պահանջմունքներից է, որը պետք է պետությունը բավարարի՝ հիմքում դնելով երջանիկ հասարակություն ունենալու գաղափարը:

Եզրակացություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկաբյուջետային քաղաքականության գործիքների համադրման և քաղաքականության առաջնահերթությունների ձևավորման դեպքում երկրները շատ դեպքերում կարող են հասնել ավելի լավ բաշխման արդյունքների և բարելավել տնտեսական արդյունավետությունը:

Երկրներն ավելի ու ավելի շատ են ընդունում հարկաբյուջետային կանոններ և հարկաբյուջետային խորհուրդներ՝ նպատակ հետապնդելով ամրապնդել իրենց հարկաբյուջետային շրջանակները, խթանել պարտքի կայունությունը և բարձրացնել հարկաբյուջետային քաղաքականության վստահելիությունը: Տնտեսությունները, հատկապես՝ զարգացողները, ընդլայնում են հարկաբյուջետային կանոնների կիրառման շրջանակները և գործիքակազմը՝ նպատակ հետապնդելով ամրապնդել իրենց հարկաբյուջետային շրջանակները, խթանել պարտքի կայունությունը և բարձրացնել հարկաբյուջետային քաղաքականության վստահելիությունը: Վերջին երկու տասնամյակի ընթացքում մեկ երկրի համար հարկաբյուջետային կանոնների միջին թիվը նույնպես կայուն աճ է գրանցել:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունը, որը վերջին տարիներին հիմնական միտումներից է, կանոնների ավելի մեծ ճկունություն է, այդ թվում՝ «խուսափելու» դրույթների միջոցով:

Բացի այդ, վերջին տասնամյակի ընթացքում կրկնապատկվել է հարկաբյուջետային խորհուրդների թիվը: Դրանցից շատերը ստեղծվել են նոր հարկաբյուջետային կանոնների մոնիտորինգի համար կամ ի պատասխան խոշոր ցնցումներից հետո արտաքին ճնշումների:

Ամենատարածվածը պարտքի կանոնների համակցությունն է ծախսերի գործառնական սահմանաչափերի և/կամ բյուջեի հաշվեկշռի հետ: Պարտքի կանոնները հատկապես գործում են զարգացող տնտեսություններում: Ծախսերի կանոնները գնալով ավելի տարածված են դառնում, հաճախ սահմանվում են որպես տարեկան ծախսերի աճի վերին շեմ: Եկամուտների կանոններն ավելի քիչ են կիրառվում՝ մասամբ արտացոլելով այն փաստը, որ կառավարությունները ավելի քիչ վերահսկողություն ունեն տարեկան եկամուտների նկատմամբ:

Հարկաբյուջետային քաղաքականության հարուստ գործիքակազմ են կիրառում Դանիան, Շվեդիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Իսլանդիան, ԱՄՆ-ն, Ճապոնիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Կանադան: Հյուսիսային Եվրոպայի երկրների առաջատար դիրքը զարմանալի չէ, քանի որ տարիներ շարունակ նրանք զբաղեցնում են առաջատար դիրքեր այնպիսի համաթվերում, ինչպիսիք են Բարեկեցության, Երջանկության, Մարդկային ներուժի զարգացման, Խաղաղության, Բնապահպանական արդյունավետության, Սոցիալական առաջընթացի, Կրթության, Տնտեսական ազատության և շատ այլ ինդեքսները: Այսպիսի արդյունքների նրանք հասնում են ինչպես տարատեսակ ենթակառուցվածքների ու սոցիալական համակարգերի ներդրման, այլև ճիշտ կառավարման շնորհիվ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի վիճակագրական հարթակ https://unctadstat.unctad.org/datacentre/dataviewer/U_S.InclusiveGrowth (Դիտման ամսաթիվը՝ 08.07.2024)
2. **Abdelkader K. and R. de Mooij**, forthcoming 2020, “Tax Policy and Inclusive Growth, IMF Working Paper” (Washington: International Monetary Fund).

3. **Clements, B., R. De Mooij, S. Gupta, and M. Keen.** 2015. Inequality and Fiscal Policy. International Monetary Fund, Washington DC.
4. **FISCAL RULES AT A GLANCE: AN UPDATE 1985—2021**, January 2022, Prepared By Hamid R. Davoodi, Paul Elger, Alexandra Fotiou, Daniel Garcia-Macia, Andresa Lagerborg, W. Raphael Lam, and Sharanya Pillai, Fiscal Affairs Department, IMF <https://www.imf.org/external/datamapper/fiscalrules/FAD%20Technical%20Manual%20-%20Fiscal%20Rules%20at%20a%20Glance%201985-2021.pdf> (Դիտման ամսաթիվը՝ 09.07. 2024)
5. **Inclusive Framework on BEPS: Progress Report September 2022-September 2023**, OECD/G20 // <https://www.oecd.org/tax/beps/oecd-g20-inclusive-framework-on-beps-progress-report-september-2022-september-2023.htm> (Դիտման ամսաթիվը՝ 01.07. 2024)
6. **Stiglitz Joseph E.** Inequality and Economic Growth [https://business.columbia.edu/sites/default/files-efs/imce-](https://business.columbia.edu/sites/default/files/efs/imce-uploads/Joseph_Stiglitz/Inequality%20and%20Economic%20Growth_0.pdf)
[uploads/Joseph_Stiglitz/Inequality%20and%20Economic%20Growth_0.pdf](https://business.columbia.edu/sites/default/files/efs/imce-uploads/Joseph_Stiglitz/Inequality%20and%20Economic%20Growth_0.pdf) (Դիտման ամսաթիվը՝ 11.06. 2024)
7. **Tax policies for inclusive growth in a changing world.** OECD report to G-20 Finance Ministers and Central Bank Governors, July 2018 <https://www.oecd.org/g20/Tax-policies-for-inclusive-growth-in-a-changing-world-OECD.pdf> (Դիտման ամսաթիվը՝ 01.06. 2024)
8. “The Inclusive Development Index 2018”, World Economic Forum, https://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2018.pdf (Դիտման ամսաթիվը՝ 09.07. 2024)

Сдана/Հանձնվել է՝ 01.07.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 10.07.2024

Принята/Ընդունվել է՝ 18.07.2024